

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ՔԼԻՎԼԵՆՏԻ

ՄԷՋ

Դեկտ. 1-ին տօնդի սահմանական բարդադ  
թի օգոստին Հ. Բ. Ը. Միութեան հան-  
գամնակութիւնը : Կարեղի է ըսել թէ  
հայութեան հայութեան այդ մէջ ճշուծու-  
կին մասնակցեցան Քլիվլէնտի ընդ-  
հանութ հայութիւնը եւ օնչ դարձու-  
ցին ուրախալի հալարապեցիչ :

Յայտնի երգչուհի Տիկին Մարի Ա-  
րագիանը դաշնակի լնկերակցու-  
թեամբ Օր. Լիլիլը Շահքաղեանի եր-  
գեց Ամերիկան Ազգային Քայլերգը  
եւ Հայկական հրդեր, արժանանալով  
դղրդապին ծափահարութիւններու :

Ժողովին առենապետեց Տիար Գա-  
րեգին Տէմիքճեանը : Օրուայ ձեռնար  
կի նախադահութեան աթոռին հրտ-  
ւիրուեցաւ հայրենասէր Տիար Խորէն  
Մովսէսեանը, տալով իր ներշնչիչ  
դադարարը Խորէն : Հայաստանի պայ-  
ծառ լրականութեան եւ Ներգաղթի  
մասին :

Բանախնօսեցին Տեարք Խոսրով Ե-  
սայեան, Անդրագաւառ Տիար Խորէն  
Տոքթ. Գեղամ Կէծքճեան եւ Գրիգոր  
Կիրակոսեան, որոնց շինիչ բանախո-  
սութիւնները բազմիցն անդամներ  
ընդհանուեցան բուռն ծափահարու-  
թիւններով : Իրենց քաջառողջ տե-  
սութիւններով գնահատելի են բոլոր  
բանախնօսները : Շատ ապրէն : Տիկին  
Էտէլին Թորոսեանը ջութակահարեց  
Ամերիկեան եւ Հայկական հրարիներ  
լունով ծափեք :

Կարգը եկաւ գործքին :

Յարգելի նախագաւառ Տիար Խորէն  
Տէմիքճեանը հանգանակութիւնը բա-  
ցաւ 2,500 տողարձով, բուռն ծափա-  
հարութիւններու եւ կեցցէններու մէջ:  
Կորճ ատենէն ներգաղթի օգտին դո-  
յացաւ 11,700 տողար : Դուքսը շա-  
րունակուելով, այս գումարը պիտի  
համար 20,000-ի կը յաւսանք : Ներ-  
գաղթի օգտին Քլիվլէնտի Կիւիկիոյ  
Ազգային ինստիտուտը Քլիվլէնտի հաշոյն  
Հ. Բ. Ը. Միութեան Կեդրոնին զըր-  
կած էր 3,500 տողար, բայց նորէն  
նուիրեց 300 տողար : Իսկ Մալաթիոյ  
Կրթասերացը նոյնական գաղութիս  
հաշոյն կեդրոն զրկած էր 2,200 տո-  
լար :

Տաղանդաւոր երգչուհի Մարի Ա-  
րագիանին նուիրուած ծաղկեփունջը  
ծախու գրուելով գոյացաւ 75 տոլար :  
Քլիվլէնտը, որ պմէն Հայկական  
ձեռնարկի իր պարագաներութիւնը  
կատարող գացութ է, այս անդամ ալ  
կատարեց եւ իր օրհնաբեր օգուտը  
տուու ներգաղթի մէծադոյն դործին :  
Կը գնահատենք բոլոր նուիրատու-  
ները :

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՆՄԱՆ ՑԱՆՉՆԱ-  
ԽՈՒՄԲԸ

1941 թուականին այս պտենուայ  
Ամերիկայի Առաջնորդ Գարեղին  
Սրբազնի (այժմ Վեհափառ Կիլի-  
կիոյ) ներկայութեամբ կազմուեցաւ  
Եկեղեցւոյ Գնման Ցանճնափումը,  
որը պարագաներու բերումով թէ այլ  
ինչ պատճառներով իր պարտակա-  
նութեան մէջ թերացաւ : Հոդաբար-  
ձութեան ջանքի ըստ պարդիւն անցան  
ազգային սրահով օժտուած յարմար  
եկեղեցի մը գնելու, քանի որ կարգ  
մը անձեր անհիմն գիտողութիւնե-

րով ձախողեցին Հոգաբարձութիւնը :

Բնաւ կարեիքը չումինք այս եղե-  
լութիւններու մանրամանութիւննը  
տալ եւ սրտացաւութեանց պատճառ  
ըլլալ կարեւորը հետեւեալն է՝ Ե-  
կեղեցւոյ Գնման Ցանճնափումը բի-  
տրամադրութեան տակ կը գտնուի  
7,000 տողարի մօտ գումարը մը . լաւ  
չէ որ այս գումարը տրամադրուի  
Ներգաղթին, որով կարելի է 150-200  
Հայեր փախադրել Հայաստան : Այ-  
լագէս այս գումարը կը հայի այցե-  
լու վարդապետներու եւ տէրտէրնե-  
րու ծախքերը վճարելով :

Ուղիչս թէ՝ բացի եկեղեցիէ ու-  
րիշ նպատակի չի կրնար գործածուիր  
այս գումարը, կը ըսեն, բայց թրըս-  
թին եթէ ուղիչ, ուելիցէ ատեն կրնայ  
հանել գրամատունէն եւ յատկացնել  
Ներդաղթին, կատարելով ազգասե-  
րական մեծագոյն գործը . կ'սպա-  
սենք :

ՄԱՐԿՈՍ ՏէՄԻՒՐ ՃԵԱՆ